

ՆԱՆՈՒՆ ՆԱՅԱՍՏԱՆԻ ՆԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ՆԱՅԱՍՏԱՆԻ ՆԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՍԱՆՄԱՆԱԴՐԱԿԱՆ ԴԱՏԱՐԱՆԻ
Ո Ր Ո Շ ՈՒ Մ Ը

2013 ԹՎԱԿԱՆԻ ՆՈՅԵՄԲԵՐԻ 8-ԻՆ ՍՏՈՐԱԳՐՎԱԾ՝ ՆԱՅԱՍՏԱՆԻ ՆԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԵՎ ՎԵՐԱԿԱՌՈՒՅՄԱՆ ԵՎ ԶԱՐԳԱՅՄԱՆ ՄԻՋԱԶԳԱՅԻՆ ԲԱՆԿԻ ՄԻՋԵՎ «ԶԱՐԳԱՅՄԱՆ ՔԱՂԱՔԱԿԱՆՈՒԹՅԱՆ ԱՌԱՋԻՆ ՎԱՐԿ» ՎԱՐԿԱՅԻՆ ՆԱՄԱՉԱՅՆԱԳՐՈՒՄ ԱՄՐԱԳՐՎԱԾ ՊԱՐՏԱՎՈՐՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ՝ ՆԱՅԱՍՏԱՆԻ ՆԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՍԱՆՄԱՆԱԴՐՈՒԹՅԱՆԸ ՆԱՄԱՊԱՏԱՍ-ԽԱՆՈՒԹՅԱՆ ՆԱՐՅԸ ՈՐՈՇԵԼՈՒ ՎԵՐԱԲԵՐՅԱԼ ԳՈՐԾՈՎ

Քաղ. Երևան

19 նոյեմբերի 2013թ.

Նայասպանի Նանրապետության սահմանադրական դատարանը՝ կազմով. Գ. Նարությունյանի (նախագահող), Կ. Բալայանի, Ֆ. Թոխյանի, Մ. Թովուզյանի, Ա. Խաչատրյանի, Վ. Նովհաննիսյանի, Ն. Նազարյանի, Ա. Պետրոսյանի (գեկուցող), Վ. Պողոսյանի,

մասնակցությամբ (գրավոր ընթացակարգի շրջանակներում)՝ Նանրապետության Նախագահի պաշտոնական ներկայացուցիչ՝ Նայասպանի Նանրապետության ֆինանսների նախարարի տեղակալ Ս. Կարայանի,

համաձայն Նայասպանի Նանրապետության Սահմանադրության 100-րդ հոդվածի 2-րդ կետի, 101-րդ հոդվածի 1-ին մասի 1-ին կետի, «Սահմանադրական դատարանի մասին» Նայասպանի Նանրապետության օրենքի 25, 38 եւ 72-րդ հոդվածների,

դռնբաց նիստում գրավոր ընթացակարգով քննեց «2013 թվականի նոյեմբերի 8-ին ստորագրված՝ Նայասպանի Նանրապետության եւ Վերակառուցման եւ զարգացման միջազգային բանկի միջեւ «Զարգացման քաղաքականության առաջին վարկ» վարկային համաձայնագրում ամրագրված պարտավորությունների՝ Նայասպանի Նանրապետության Սահմանադրությանը համապատասխանության հարցը որոշելու վերաբերյալ» գործը:

Գործի քննության առիթ է հանդիսացել Հանրապետության Նախագահի՝ 2013 թվականի նոյեմբերի 13-ի Հայաստանի Հանրապետության սահմանադրական դատարան մուտքագրված դիմումը:

Ուսումնասիրելով սույն գործով զեկուցողի գրավոր հաղորդումը, Հանրապետության Նախագահի պաշտոնական ներկայացուցչի գրավոր բացատրությունը, հետազոտելով վարկային համաձայնագիրը եւ գործում առկա մյուս փաստաթղթերը, Հայաստանի Հանրապետության սահմանադրական դատարանը **Պ Ա Ր Զ Ե Ց**.

1. Հայաստանի Հանրապետության եւ Վերակառուցման եւ զարգացման միջազգային բանկի միջեւ «Զարգացման քաղաքականության առաջին վարկ» վարկային համաձայնագիրն (Վարկային համաձայնագիր) ստորագրվել է 2013 թվականի նոյեմբերի 8-ին:

2. Վերակառուցման եւ զարգացման միջազգային բանկը (Բանկ) Հայաստանի Հանրապետությանը (Վարկառու) տրամադրում է երեսունմեկ միլիոն (31.000.000) ԱՄՆ դոլար գումարի չափով վարկ (Վարկ), Վարկային համաձայնագրով սահմանված կարգով եւ ժամկետներում, Վարկային համաձայնագրով նախատեսված ծրագրին (Ծրագիր) աջակցելու համար ֆինանսավորում տրամադրելու նպատակով:

Վարկի փակման ամսաթիվն է 2014 թվականի մարտի 31-ը:

Համաձայն Վարկային համաձայնագրի՝ Ծրագրի շրջանակներում Վարկառուի կողմից իրականացված գործողությունները ներառում են հետևյալ ուղղությունները.

1) մրցունակության հզորացում, մասնավորապես՝

- տեսչական բարեփոխում.
- վարկային հաշվեպրությունների գրավի ապահովման եւ սնանկության օրենքների բարեփոխումներ.
- քաղաքացիական ծառայության բարեփոխումներ.
- օդային կապ.
- ֆինանսական հատվածի զարգացում.

2) ֆիսկալ, սոցիալական եւ բնապահպանական կայունության ամրապնդում, մասնավորապես՝

- հարկային եկամուտների մոբիլիզացում.
- սոցիալական օգնություն.
- բնապահպանական կայունության ներդրում հանքարդյունաբերության ոլորտում:

3. Վարկային համաձայնագրով Նայասպանի Նանրապետությունը, մասնավորապես, սրանձնում է հետևյալ պարտավորությունները.

ա) Վարկային համաձայնագրով սահմանված չափով եւ կարգով վճարել սկզբնական կոմիսիոն վճար.

բ) Վարկային համաձայնագրով սահմանված չափով եւ կարգով վճարել փոկոսագումար՝ յուրաքանչյուր փարվա մայիսի 15-ին եւ նոյեմբերի 15-ին.

գ) Վարկի մայր գումարի մարումը կատարել 2023 թվականի նոյեմբերի 15-ից մինչև 2037 թվականի նոյեմբերի 15-ը՝ մասհանված գումարի 3.33 փոկոսի չափով, իսկ 2038 թվականի մայիսի 15-ին՝ մասհանված գումարի 3.43 փոկոսի չափով.

դ) Վարկի միջոցները չօգտագործել անընդունելի ծախսերը ֆինանսավորելու համար: Եթե ցանկացած ժամանակ Բանկը հայտնաբերի, որ Վարկի գումարն օգտագործվել է բացառված ծախսերի վճարման նպատակով, Վարկառուն պետք է Բանկի կողմից ծանուցում սրանալուց անմիջապես հետո վերադարձնի Բանկին այդ վճարմանը համարժեք գումար: Նման պահանջի դեպքում Բանկին վերադարձված գումարները չեղարկվում են:

4. Նայասպանի Նանրապետության կառավարությունը 2013 թվականի նոյեմբերի 7-ին հավանություն է փվել սույն գործով քննության առարկա Վարկային համաձայնագրին:

Նանրապետության Նախագահի պաշտոնական ներկայացուցչի գրավոր բացատրության համաձայն՝ Ծրագրի շրջանակներում դրամական միջոցները հատկացվելու են՝ հիմնվելով Նայասպանի Նանրապետության կողմից իրականացված գործողությունների վրա: Տրամադրված միջոցներն ուղղվելու են բյուջեպային ընթացիկ ծախսերի ֆինանսավորմանը:

5. Սահմանադրական դատարանը գրնում է, որ Վարկային համաձայնագրով Նայասպանի Նանրապետության կողմից սրանձնվող պարտավորությունները, մասնավորապես, վերաբերելի են Նայասպանի Նանրապետության Ազգային ժողովի եւ կառավարության՝ Նայասպանի Նանրապետության Սահմանադրությամբ եւ օրենքներով նախատեսված լիազորություններին:

Սահմանադրական դատարանն ինչպես իր որոշումներում, այնպես էլ իր որոշումների կատարման վիճակի վերաբերյալ փարեկան հաղորդումներում բազմիցս անդրադարձել է վարկային միջոցներով ֆինանսավորվող ծրագրային միջոցների նպատակային օգտագործման, դրանց նկատմամբ արդյունավետ վերահսկողության

անհրաժեշտության հիմնախնդիրներին: Սույն գործով քննության առարկա Վարկային համաձայնագիրը բազմաբնույթ ծրագրային նպատակներից էլնելով պահանջում է համալիր վերահսկողություն՝ վարկային միջոցների արդյունավետ օգտագործման եւ ՆՏ սպանձնած միջազգային պարտավորությունների բարեխիղճ կատարումն ապահովելու առումով:

Էլնելով գործի քննության արդյունքներից եւ ղեկավարվելով Նայասպանի Նանրապետության Սահմանադրության 100-րդ հոդվածի 2-րդ կետով, 102-րդ հոդվածի 1-ին եւ 4-րդ մասերով, «Սահմանադրական դատարանի մասին» Նայասպանի Նանրապետության օրենքի 63, 64 եւ 72-րդ հոդվածներով, Նայասպանի Նանրապետության սահմանադրական դատարանը **Ո Ր Ո Շ Ե Ց**.

1. 2013 թվականի նոյեմբերի 8-ին ստորագրված՝ Նայասպանի Նանրապետության եւ Վերակառուցման եւ զարգացման միջազգային բանկի միջեւ «Զարգացման քաղաքականության առաջին վարկ» վարկային համաձայնագրում ամրագրված պարտավորությունները համապատասխանում են Նայասպանի Նանրապետության Սահմանադրությանը:

2. Նայասպանի Նանրապետության Սահմանադրության 102-րդ հոդվածի 2-րդ մասի համաձայն սույն որոշումը վերջնական է եւ ուժի մեջ է մտնում հրապարակման պահից:

ՆԱԽԱԳԱՀՈՂ

Գ. ՆԱՐՈՒԹՅՈՒՆՅԱՆ

19 նոյեմբերի 2013 թվականի
ՍԴՈ-1126